<<ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 135 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ընթերցած նյութի բանավոր վերարտադրումը

/միջառարկայական կապեր՝ Գրականություն և Կենսաբանություն առարկաներ/

Ուսուցիչ՝ <<Վարդանանք>> կրթահամալիր

Դալլաքյան Լիլիթ Սուրիկի

Խումբ՝ առաջին

Վերապատրաստող՝ Սողոմոնյան Արամ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3-5

Էպիլեպսիան հիվանդության տեսակ----------6-9

Շիրվանզադե <<Չար ոգի>>----------10-13

Ինչպե՞ս է հասարակությունը վերաբերվել և վերաբերվում Էպիլեպսիա ունեցողներին----------13-15

Աշխարհահռչակ մարդիկ, որոնք տառապել են էպիլեպսիայով, բայց դա չի խանգարել նրանց՝ ստեղծելու համամարդկային արժեքներ----------15-18

Եզրակացություն----------19

Օգտագործված գրականություն----------20

Ներածություն

Գրականությունն արվեստի տեսակ է, արվեստների մայրն է և ոչ թե հերթական առարկա: Գրականությունը մարդու մեջ դաստիարակում է վեհի, բարձրի, գեղեցիկի, հերոսականի զգացողություն: Այդ ամենը ներկայացվում է գրողների որոշակի երկերով , գրական կերպարների միջոցով: Գրականությունը մարդկայնության, սիրո դասեր է տալիս: <<Գրականություն>> առարկայի դասավանդումը դպրոցում հետապնդում է հենց այդ նպատակները: Գրականությունը մի կարևոր առաքելություն ունի՝ հղկելու լեզուն, որովհետև լեզվի օրենքները մի բան են , երբ լեզուն սովորում են ըստ քերականության օրենքների, իսկ լեզվի բառապաշարը , ոճը, բարձր հայերենը՝ մեկ այլ բան: Լեզվական մտածողությունը, ոճի, խոսքի գեղեցկությունը մարդուն փոխանցվում են ազգային գրականությամբ: Երանելի է նա, ով խոսում է անթերի, կատարյալ լեզվով: Գեղեցկության գաղտնիքը նախևառաջ այստեղ է: Վերջապես գրականությունը միջոց է ճանաչելու մարդ արարածին: Հայտնի են գրականության մի քանի բնորոշումներ, նախևառաջ՝ մարդագիտություն: Այն ճանաչել է տալիս մարդուն, նրա ներաշխարհը, բացահայտում նրա գիտակցական, անգիտակցական, ենթագիտակցական վարքի կանոնները, մերկացնում օտար աչքի համար փակ նրա ընդերքը: Մենք կողք կողքի ապրում ենք և իրար այդքան էլ չենք ճանաչում: Գրականությունն այն արվեստն է և դպրոցում ուսուցանվող այն առարկան, որ խորքային մարդագիտություն է սովորեցնում, հույզ, զգացմունք և ապրումներ արթնացնում:

<< Հայ գրականությունը հայոց պատմական հոգեկերտվածքի գեղարվեստական խտացումն է: Հայ գրականությունը հայոց ոգու, հայոց պատմության, հայկական բնաշխարհի, ազգային կյանքի ու կենցաղի, պատմական հիշողության , ժամանակների կապի, գույների, ձայների ու գծերի գեղարվեստական մարմանվորումն է: Հայ մարդու հոգեկերտվածքն առաջին հերթին հայ գրականության մեջ է , հենց թեկուզ աստվածային Նարեկացու <<Ողբերգության մատյանում>>, որի մեջ հայի ու Հայաստանի մասին չի

խոսվում, բայց հայականությունը լուծված է ընդերքի մեջ և ընդերքից երկինք հասած Արարատի պատկերում>> [1]:

Գրականությունը կյանքի արտացոլումն է իր բոլոր վիճակների մեջ. այն կարող է լինել հուզառատ և հոգեթով, գեղեցիկ և արբեցնող, այն կարող է լինել հեգ և թշվառ, հուսահատ և ողբերգական: Եվ ընթերցողը պետք է իմանա, որ գրական երկերը ծնվել են ցավից, ուրախությունից, հույսից, հուսահատությունից, ողբից... Բոլոր ժամանակներում կյանքը արտացոլվել է գրականության մեջ ու գրական էջերից ճչացել է ժամանակաշրջանի, մարդկանց կենցաղավարության, սովորույթների, լավ և վատ հատկանիշների մասին: Թումանյանն իր ստեղծագործություններում ներկայացրել է նահապետական կյանքը՝ իր բարքերով, կենցաղով և ինչու չէ, ճակատագրեր խեղող վատ սովորույթներով: Նրա յուրաքանչյուր ստեղծագործություն ըմբոստության ճիչ է հայի արմատացած գաղափարախոսության, հայի հետադիմական հայացքների դեմ: Նահապետական բարքերին, ընդունված ու ժառանգաբար փոխանցված սովորույթներին զոհ են գնում Մարոն, Սաքոն, Անուշը...Նույն բարքերի պատճառով Բակունցի մոտ տրորվում է սարերում ապրող ծաղկի պես գեղեցիկ ծաղկահասակ կինը:

Յուրաքանչյուր գրող իր ապրած ժամանակաշրջանում գրականության միջոցով ներկայացրել է տիրող բարքերը, սովորույթները, մարդկանց կյանքն ու վերաբերմունքը մեմեկու նկատմամբ:

Շիրվանզադեն իր <<Չար ոգին>> կամ <<Ցավագարը>> վիպակում ներկայացնում է նահապետական կյանքն ու գյուղը, մարդկանց և մարդկային մի ցավալի արատ: Հասարակության, այս դեպքում հարևանների չարախոսությունից, իր և շրջապատի սնոտիապաշտությունից դրդված՝ հայ կինը թաքցնում է գեղեցկադեմ աղջկա բնածին հիվանդությունը, որն էլ ի վերջո դառնում է նրա դժբախտությունն ու մահվան պատճառը: Հիվանդություն և կյանք: Կյանքն իր բոլոր խնդիրներով թևածում է գրականության էջերում: Հեղինակը բարձրաձայնում է իրական ողբերգություն. ամո՞թ է հիվանդ լինելը: Ինչու՞ են չարախոսում մարդիկ: Արդյոք այսօր՝ մեր լուսառատ օրերում, հաղթահարվա՞ծ է այդ կանխակալ գաղափարը:

Աշակերտներին հանձնարարվեց կարդալ Շիրվանզադեի ,,Չար ոգին,, վիպակը: Աշակերտը պետք է հասկանա, որ հեղինակը գրական երկը ինքնանպատակ չի ստեղծել, այլ հետամուտ է եղել որևէ գաղափարի, որևէ միտք կամ երևույթ բացահայտելու , գեղեցիկը տեսնելու և գնահատելու, չարիքը արմատախիլ անելու , թերությունները մատնանշելու կամ ընդհակառակը՝ գովաբանելու և որպես օրինակ ցուցադրելու: Առհասարակ, որպեսզի բանավոր նյութի վերարտադրումը ինքնանպատակ չլինի և սովորողների մոտ կարևորվի այդ գործընթացին ավելի լուրջ վերաբերվելը, ապա տրված թեման պետք է մոտիվացնել և բովանդակային հետազոտական աշխատանք կատարել: Այն է, որ սովորողը ընթերցած նյութի շուրջ լուրջ քննարկում ծավալի, նաև այլ աղբյուրներից օգտվելով՝ կարողանա բանավոր խոսքը հարստացնի: Իսկ դա հնարավոր է միայն ընթերցված նյութի շուրջ տարբեր բանավոր բովանդակային վերարտադրություններ կատարելով:

[1] Դ. Գասպարյան «Հայ գրականությունը հայոց պատմության հոգեկերտվածքի գեղարվեստական խտացումն է»: 07.08.2020 Սյունյաց երկիր. հարցազրույց

Ստորև բերում եմ մեկ ինտեգրված դասի օրինակ, որտեղ սովորողներին,միևնույն նյութի շուրջ ընդգրկելով, հնարավորություն է տրվում խորքային վերարտադրել ընթերցված նյութը տարբեր կողմերից: Սա նաև օգնում է նոր բառահումք ձևավորելուն, սեփական տեսակետ ունենալուն, բազմակողմնակիորեն զարգանալուն: Գրականության դասերին կարևոր է ոչ միայն գրական տեքստն ընթերցելն ու ըստ հեղինակի վերարտադրելը, այլև վերլուծելը, քննարկելը, տարբեր տեսակետներից դիտարկելը, թեման ու ժամանակաշրջանը ուսումնասիրելը:

Իններորդ դասարանի աշակերտներին հանձնարարվեց բաժանվել չորս խմբի: Առաջին խումբը պետք է հետազոտեր, համապատասխան գրականությունից, համացանցից գտներ << Էպիլեպսիա>> հիվանդությանն առնչվող նյութեր՝ նրա ծագումը, ցնցումները, հետևանքները, բուժումը և արդյոք ունի՞ ժառագաբար փոխանցվող հատկանիշներ :

Երկրորդ խումբը պետք քննարկեր Շիրվանզադեի <<Չար ոգին>> /ստեղծագործությունը բոլորն էին կարդացել/: Նրանք պետք է վերլուծեին գլխավոր կերպարների վարքագիծը, դրդապատճառները, գործողությունների շղթան, նրանց հոգեվիճակն ու հոգեբանությունը: /Նայեցին նաև համապատասխան համր ֆիլմը և իրենց սահիկաշարում ներառեցին ֆիլմից լուսանկարած պատկերներ/:

Երրորդ խումբը հավաքագրած նյութերի միջոցով պետք է ներկայացներ անբուժելի կամ արտաքին ցնցումներ ունեցող հիվանդությամբ տառապող մարդկանց նկատմամբ հասարակության վերաբերմունքը: Եվ քանի որ հիվանդության ծագումը հին է, պետք է ներկայացնեին հասարակության վերաբերմունքը մեր ապրած ժամանակաշրջանից առաջ և մեր օրերում:

Աշխատանքային չորրորդ խումբը պետք է գտներ և ներկայացներ աշխարհահռչակ մարդկանց, որոնք տառապել կամ տառապում են Էպիլեպսիա հիվանդությամբ, բայց դա չի խանգարել նրանց ապրել և համամարդկային բարձր արժեքներ ստեղծել: Եվ պետք է արմատացնել մեկ գաղափար, որ ոչ մի հիվանդություն խոչընդոտ չէ՝ ապրելու և արարելու համար:

Աշխատանքային բոլոր խմբերը իրենց ուսումնասիրությունները ներկայացրեցին պարզ, գրագետ, մասնագիտական եզրույթներով հագեցած խոսքով, ինչպես նաև ցուցադրեցին սահիկաշարով:

Էպիլեպսիան հիվանդության տեսակ

Էպիլեպսիա , ընկնավորություն առաջացել է հին հունարենից՝ հարկադրել, տիրել, տանջել և լատիներեն՝ ,, epilepsia,, կամ ,,caduca,, բառերից, որոնք նշանակում են նյարդաբանական հիվանդությունների խումբ, որն ունենում է տարբեր ծագումնաբանություն և բնութագրվում է կրկնվող էպիլեպտիկ նոպաներով: Վերջիններս ուղեկցվում են շարժողական, զգայական և հոգեկան գործառույթների խանգարումներով: Էպիլեպտիկ նոպաները կարող են տարբեր տևողություն ունենալ՝ մի քանի վայրկյան տևող աննկատ դրվագներից մինչև ավելի երկար տևող ցնցումային նոպա: Ցնցումների պատճառով հիվանդները կարող են ստանալ բազմաթիվ վնասվածքներ, մինչև անգամ ոսկորների կոտրվածքներ: Էպիլեպսիայի դեպքում նոպաները հակում ունեն կրկնվելու և որպես կանոն ունեն սադրիչ պատճառ: Մեկուսացած նոպաները, որոնք դրդվել են ինչ-որ հատուկ գործոններից, օրինակ՝ միջավայրի վնասակար գործոններից, չեն համարվում էպիլեպսիա:

Էպիլեպսիայի պատճառը մեծ մասամբ հայտնաբերել չի հաջողվում: Գլխուղեղի վնասվածքը, ինսուլտը, ուռուցքը, ինֆեկցիաները և բնածին անոմալիաները կարող են հանդիսանալ էպիլեպսիայի պատճառ, և այս գործընթացը կոչվում է էպիլեպտոգենեզ: Հայտնի են որոշ գենետիկական մուտացիաներ, որոնք ունեն անմիջական դեր էպիլեպտոգենեզում, բայց հանդիպում է ավելի քիչ դեպքերում: Էպիլեպտիկ նոպան առաջանում է ուղեղի կեղևում հավելյալ կամ աբնորմալ նեյրոնալ ակտիվության պատճառով[2]:

Ախտորոշումը, առաջին հերթին կայանում է նման նոպաներով ընթացող վիճակները ժխտելով, օրինակ՝ ալկոհոլային հանման համախտանիշ, էլեկտրոլիտային հավասարակշռության խախտում: Տարբերակիչ ախտորոշման համար կարող են անհրաժեշտ լինել գործիքային և լաբորատոր հետազոտություններ: Հենց էպիլեպսիայի համար կարևոր է գլխուղեղի էլեկտրոէնցեֆալոգրամման /ԷԷԳ/, բայց վեջինիս բացասական արդյունքը չի բացառում հիվանդությունը:

Այլ հիվանդությունների արդյունքում զարգացած էպիլեպսիան կարելի է կանխարգելել: Նոպաների յոթանասուն տոկոսը կարելի է կարգավորել դեղորայքով, ընդ որում դրանք ոչ շատ թանկարժեք դեղեր են: Եթե նոպաները չեն պատասխանում դեղորայքային բուժմանը՝ պետք է իրականացնել նեյրոստիմուլյացիա՝ վիրահատական միջամտություն կամ սննդակարգի փոփոխություններ: Ոչ բոլոր դեպքերում է, որ էպիլեպսիան մնում է մինչև կյանքի վերջ, երբեմն այն անցնում է, և այլևս դեղորայքի կարիք չի լինում:

Երկու հազար տասնհինգ թվականի տվյալներով աշխարհում շուրջ երեսունինը միլիոն մարդ ունի էպիլեպսիա: Մոտավոր ութսուն տոկոսը դեպքերի գրանցվում է զարգացող երկրներում: Ի տարբերություն հազար ինը հարյուր ինսուն թվականի, երբ մահվան դեպքերը հարյուր տասներկու հազարի էին հասնում , երկու հազար տասնհինգ թվականին այդ թիվը դարձել է հարյուր քսանհինգ հազար: Էպիլեպսիան ավելի հաճախ

[2] Այս հոդվածի կամ նրա բաժնի որոշակի հատվածի սկզբնական կամ ներկայիս տարբերակը վերցված է Քրիեյթիվ Քոմմոնս Նշում-Համանման տարածում 3.0 (Creativ Commons BY-SA 3.0) ազատ թույլագրով թողարկած Հայկական սովետական հանրագիտարանից (հ.4, էջ 62):

դիտվում է մեծահասակների մոտ: Զարգացած երկրներում հիվանդության սկիզբը կա՛մ վաղ մանկական տարիքում է, կա՛մ ծերունական հասակում: Զարգացող երկրներում ավելի ուշ մանկական ու երիտասարդության ժամանակ է դիտվում: Էպիլեպսիա ունեցողների հինգից տասը տոկոսը չի ունեցել նոպա մինչև ութսուն տարեկանը, որովհետև չի եղել սադրիչ գործոն, ու հավանականությունը, որ այդ տարիքում կդրսևորվի առաջին նոպան, քառասունից հիսուն տոկոս է: Տարբեր երկրներում օրենքները տարբեր են , բայց հիմնականում այս հիվանդություն ունեցողներին արգելված է մեքենա վարելը, կամ թույլ է տրվում, եթե չեն ունեցել նոպա որոշակի սահմանված ժամանակ:

Էպիլեպսիան բնութագրվում է ցնցումների կրկնման բարձր հաճախականությամբ: Ցնցումները կարող են ունենալ տարբեր դրսևորումներ՝ կախված գլխուղեղի ախտահարված հատվածից և հիվանդի տարիքից:

Էպիլեպտիկ նոպաները միևնույն հիվանդի մոտ կարող են տարբեր լինել հիվանդության ընարբեր փուլերում: Դա կախված է էպիլեպտիկ օջախի տեղակայումից, պաթոլոգիական գործընթացի դինամիկայից, լրացուցիչ ախտաբանական ազդեցություններից, տարիքից և այլ գործոններից:

Հանդիպում են ֆոկալ կամ պարցիլ, այսինքն՝ օջախային էպիլեպտիկ նոպաներ, որոնց բնույթը պայմանավորված է էպիլեպտիկ օջախի լոկալիզացիայով: Պարզ պարցիլ նոպաների ժամանակ գիտակցության խանգարում չի դիտվում, բնութագրվում են առանձին շարժողական, զգայաշարժողական /տեսողական, լսողական, հոտառական, համային զգայություններ, գլխապտույտ , / վեգետատիվ / գունատություն, քրտնաարտադրություն, դեմքի կարմրություն, բիբերի լայնացում, / կամ հոգեկան / բարձրագույն հոգեկան գործառույթների խանգարում՝ դեժա վյու, կոգնիտիվ՝ ժամանակի զգացման խանգարում, քնանման վիճակներ, աֆեկտիվ խանգարումներ՝ վախ, ջղայնություն, պատրանքներ, կառուցվածքային ցնորքներ՝ երաժշտություն, պատկերներ/ ախտանիշներով, կամ դրանց համադրությամբ:

Երկուսուկես ամսականից մինչև չորս տարեկան երեխաների համար բնորոշ են ,,կայծակնային,, նոպաները, որոնք ընթանում են դողի ու հանկարծակի ցնցումների, գլխի և իրանի համաչափ վեր ու վար շարժումների տեսքով , հայացքը կանգ է առնում, դեմքը՝ գունատվում: Չորս տարեկանից հետո ի հայտ են գալիս փոքր նոպաները, որոնք բնորոշվում են գիտակցության կարճատև՝ մի քանի վայրկյանից մի քանի րոպե տևող բացակայությամբ, որը չի ուղեկցվում ցնցումներով: Փոքր նոպաները, որոնք տևում են վայրկյաններ, երեխաների մոտ կարող են լինել օրական տասնյակից հարյուր անգամներ: Երբեմն դրանք աննկատ են անցնում ինչպես շրջապատի, այնպես էլ հիվանդների համար:

Նոպաների պարցիալ տեսակը ուղեկցվում են գիտակցության խանգարմամբ: Սրանք իրենց հերթին կարող են սկսվել որպես պարզ պարցիալ նոպաներ, ապա վերածվել պարզի կամ ուղղակի սկսվել գիտակցության խանգարումներով՝ կորստով կամ ավտոմատիզմներով:

Երբեմն պարցիալ նոպաները վերաճում են գեներալիզացված նոպաների, որոնց ցուցանիշը գիտակցության կորուստն է՝ ի հակադրություն գիտակցության փոփոխությունների, որոնք առկա են պարզ պարցիալ նոպաների ժամանակ:

Երկրորդային գեներիլազացված նոպաները, որոնց բնորոշ են նշանակալի վեգետատիվ դրսևորումներ, լինում են ցնցումային և առանց ցնցումների: Գեներալիզացված նոպաների մի տարատեսակը աբսանսներն են: Աբսանսները կարող են ընթանալ գիտակցության խանգարումով , կլոնիկ, ատոնիկ, տոնիկ բաղադրիչներով, ավտոմատիզմներով և կամ վեգետատիվ ախտանիշներով: Գեներալիզացված նոպաների մյուս տեսակներն են ՝ միոկլոնիկ, կլոնիկ, տոնիկ, տոնիկ-կլոնիկ և ատոնիկ նոպաները:

Էպիլեպտիկ ստատուսը կայուն էպիլեպտիկ վիճակ է, որը բնութագրվում է անընդհատ կրկնվող նոպաներով, որոնք հաջորդում են մեկը նյուսին, ամեն հաջորդ նոպան առաջանում է այն ժամանակ , երբ դեռ պահպանված են նախորդի առաջացրած գիտակցության խանգարումները, և դրանց միջև եղած դադարների ընթացքում հիվանդը չի կարողանում լիովին հասնել իր նորմալ հոգեկան և նյարդաբանական վիճակին:

Ցնցման ակտիվ ֆազայի ավարտից հետո սովորաբար լինում է վերականգնման շրջան, որի ընթացքում հիվանդը դեռ շփոթված է, բայց գիտակցությունն աստիճանաբար վերականգնվում է: Հիմնականում տևում է երեքից տասնհինգ րոպե , կարող է լինել ավելի երկարատև՝ մինչև մի քանի ժամ: Այլ հաճախակի հանդիպող ախտանիշներից են հոգնածությունը, գլխացավերը, խոսելու դժվարացումը և ոչ սովորական վարքը: Նոպայից հետո փսիխոզը հանդիպում է վեցից տասը դեպքերում: Առավել հաճախ հիվանդները չեն հիշում այս շրջանը: Լոկալիզացված թուլությունը, հայտնի որպես Թոդդի պարալիզ, տևում է մի քանի վայրկյան, հազվադեպ՝ մի քանի օր[3]:

Էպիլեպսիան կարող է բացասաբար անդրադառնալ հիվանդի սոցիալական և հոգեսոցիալական վիճակի վրա: Այդ անհատները կարող են մեկուսանալ հասարակությունից , իրենց վրա կրում են այդ խարանը և մերժվում հասարակության կողմից : Այս ամենի պատճառով հիվանդություն ունեցող անձինք ավելի վատ են սովորում և հետագայում ավելի ցածր եկամուտներ ունենում: Ուսուցման հետ կապված խնդիրները շատ հաճախ են հանդիպում, հատկապես՝ երեխաների մոտ: Ստիգման՝ խարանը, տարածվում է նաև հիվանդի ընտանիքի վրա: Որոշակի ախտաբանական վիճակներ ավելի հաճախ հանդիպում են էպիլեպսիայով տառապող անձանց մոտ, մասամբ պայմանավորված հիվանդությն ախտաֆիզիոլոգիայով: Այդպիսիք են՝ դեպրեիան, տագանապը, միգրենը և այլն: Ուշադրության անբավարարության և գերակտիվության համախտանիշը /ՈՒԱԳՀ/ երեքից հինգ անգամ ավելի հաճախ է հանդիպում էպիլեպսիա ունեցող երեխաների մոտ: ՈՒԱԳՀ-ը և էպիլեպսիան ունեն զգալի ազդեցություն երեխայի վարքի, ուսուցման և զարգացման վրա: Էպիլեպսիա ունեցողների մեջ աուտիզմով տառապողների թիվը ևս բարձր է:

Էպիլեպսիա ունեցող անձանց մեծ մասին ամենօրյա դեղորայքային բուժում նշանակվում է երկրորդ նոպայից հետո, իսկ բարձր ռիսկի խմբում գտնվողներին՝ առաջինից հետո: Դեղորայքային բուժման նկատմամբ կայուն դեպքերում խորհուրդ է տրվում նաև այլ մոտեցումներ, ինչպիսիք են հատուկ սննդակարգը, նյարդախթանիչի իմպլանտացիան կամ նյարդավիրաբուժությունը:

[3] ՀԱԿ, Հոգեկան առողջության և նյութական կախյալության բաժանմունք, Նյարդաբանական հիվանդությունների և նեյրոգիտութան զարգացման համար ծրագիր, Միջազգային Լիգա ընդդեմ Էպիլեպսիայի (2005): Atlas, epilepsy care in the world, 2005: ժնև:

Ցնցումի մեջ գտնվողին պետք է շրջել կողքի, որպեսզի կանխվի բերանի խոռոչի պարունակության ասպիրացիան դեպի թոքեր: Խորհուրդ չի տրվում լեզուն մատներով պահել, քանզի դա կարող է առաջացնել փսխում և վնասել պահողի մատները: Մինչև նոպայի ավարտը պետք է ձեռնարկել միջոցառումներ՝ հետագա ինքնավնասումը կանխելու համար:

Ներկայումս խիստ կարևորություն է տրվում նոպաների կանխարգելմանը և հետազոտություններ են կատարվում հայտնաբերելու ԷԷԳ-ի միջոցով ցնցումների վաղ ախտորոշումը: Ցավոք սրտի, երկու հազար տասնմեկ թվականի տվյալներով դեռ չկա դրական արդյունք : Ուսումնասիրությունները կատարվում են կենդանիների վրա, ում մոտ էպիլեպտիկ նոպան առաջացնում են արագ թարթող լուսային լամպերով:

Կան կազմակերպություններ, որոնք օգնություն են տրամադրում էպիլեպսիայով տառապողներին և նրանց ընտանիքի անդամներին: Ստվերներից դուրս /The Out of the Shadows/ կազմակերպությունը, առողջապահության համաշխարգային կազմակերպությունը, Ընդդեմ էպիլեպսիայի միջազգային կազմակերպությունը /The international League Against Epilepsy (ILAE)/ և էպիլեպսիայի միջազգային գրասենյակը օգնություն են ցուցաբերում ամբողջ աշխարհում: Էպիլեպսիայի միացյալ խորհուրդը գործում է ՄԹ-ում և Իռլանդիայում. էպիլեպսիայի ֆոնդը ազգային կառույց է ԱՄՆ-ում, որն աշխատում է դարձնել այս հիվանդներին հասարակության լիիրավ անդամներ և, իհարկե, զբաղվում է բուժմամբ և բուժման նոր մոտեցումների հայտնաբերմամբ:

Ալեքսանդր Շիրվանզադե

Չար ոգին

,,Չար ոգին,, կամ ,,Ցավագարը,, վիպակը արձակագրի գավառական քաղաքի կյանքը պատկերող ստեղծագործություններից է, որը գրվել է 1894 թվականին:

Հեռանալով իր ծննդավայրից՝ Շիրվանզադեն այլևս չի վերադառնում այնտեղ: Բայց հիշողության մեջ միշտ վառ է մնում հայրենի եզերքի ուրախ ու տխուր պատկերները: Նոր քաղաքում նրա միտքը միշտ զբաղված է լինում իր քաղաքի մարդկանց հոգսերով: Թողնելով հայրենի քաղաքը՝ արհեստավորներն ու գյուղացիները Շամախուց և Անդրկովկասից տեղափոխվում էին Բաքու, աշխատում նավթաարդյունաբերական հանքերում , խոնավ գետնախորշերում: Տևական ժամանակ Շիրվանզադեին զբաղեցնում էր այդ մարդկանց ճակատագիրը, գաղթի պատճառները: Նա դեռևս չէր տեսնում նոր քաղաքի առաջադիմական կողմերը, և միայն տարիներ հետո իր հոդվածներում Շիրվանզադեն փորձում է բացատրել գաղթի պատճառները: Նա նշում է, որ գաղթի պատճառները կապված են գավառական քաղաքի տնտեսական ու բարոյական հեղաբեկումների հետ, որ առաջ եկան տասնիններորդ դարի երկրորդ կեսին: Այս խնդիրներին Շիրվանզադեն անդրադառնում է ,,Նամուս, ,, Չար ոգի,, , ,,Վարդան Ահրուման,, և այլ ստեղծագործություններում՝ ամբողջացնելով գավառական կյանքը իր հակասություններով[4]:

,,Չար ոգին,, վիպակի դիպաշարը կատարվում է մի աննշան քաղաքում, որի տները հին են , ավերակ դարձած և միակ գեղեցիկ բանը այդտեղ անձեռակերտ բնությունն է: Ամառվա մի օր փողոցում խաղում է երեխաների մի խումբ, որոնց ծիծաղն ու աղաղակը լցրել էին փողոցը կենդանությամբ: Նրանց մեջ կար յոթ տարեկան մի աղջիկ, որին ընկերները ,,սիրուն Սոնա,, էին ասում: Հանկարծ աղջիկն ընկնում է և սկսում է գալարվել գետնի վրա, աչքերը կիսափակ է լինում և բերանից փրփուր է թափվում: Ընկերները վախենում են մոտենալ Սոնային: Այդ ժամանակ փողոցում հայտնվում է գիժ-Դանելը, որից երեխաները սարսափում էին: Նա մոտենում է ընկածին և տեսքից հասկանում, որ աղջիկն ընկնավոր է: Գիժ-Դանելը աղջկան տանում է տուն, ավելի ուշ գալիս է Սոնայի մայրը՝ հացթուխ Շուշանը, որը հեռացնում է երեխաներին ՝ թաքցնելու համար աղջկա հիվանդությունը: Դրանից հետո Սոնան այլևս դուրս չի գալիս տնից . հացթուխը վախենում էր, որ նրա հիվանդության մասին բոլորը կիմանան, և աղջկան ոչ ոք այլևս կնության չի առնի: Սոնան ամբողջ օրը զբաղված էր տնային գործերով ՝ գուլպա էր գործում, տուն մաքրում, ճաշ եփում: Սոնայի մայրը աստվածավախ կին էր . նա միշտ մասնակցում էր պատարագին , աղոթում աղջկա առողջության համար, իսկ հայրը՝ պայտար Ոսկանը, կնոջ հակապատկերն էր. նա ամեն օր տուն էր գալիս հարբած, երբեմն վիճում էր կնոջ հետ, երբեմն՝ նույնիսկ ծեծում: Վաղուց էր, ինչ նա չէր աշխատում . օրվա ապրուստը վաստակում էր կինը:

Օր օրի մեծանում էր Սոնան , իսկ հիվանդությունն ավելի էր զգացնել տալիս իր գոյությունը: Սոնայի ընկերուհիներն արդեն ամուսանցել էին, նրանցից ոմանք մայր էին

[4] Թամրազյան Հրանտ (1978): Շիրվանզադե / Կյանքը և գործը/: Երևան: ԵՊՀ հրատ.: Էջեր 150-162:

դարձել : Սոնան ցանկանում էր տեսնել նրանց դեմքերը, մասնակցել հարսանիքներին: Նա հիմա արդեն գիտակցում էր իր հիվանդության ծանրությունը , սակայն հույս ուներ, որ Աստված մեծ է, որ ինքը կբուժվի: Մի օր էլ մայր ու աղջիկ որոշում են գնալ գյուղի ծայրի եկեղեցին՝ ուխտի: Ճանապարհին նրանց մոտենում է գիժ-Դանելի եղբոր որդին՝ Մուրադը: Սոնային տեսնելով՝ Մուրադը սիրահարվում է , և մի քանի օր հետո Սոնայենց տուն է գալիս չոլախ Սահարնազը, որը զբաղվում էր ամուսանական միջնորդությամբ: Նա հայտնում է իր գալու նպատակը, առնում Շուշանի համաձայնությունը և հեռանում: Որոշ ժամանակ անց Սոնան նշանվում է ունևոր Մուրադի հետ: Սոնան իրեն մեղավոր է զգում իր հիվանդությունը ծածկելու համար: Չորս ամիս հետո Սոնան և Մուրադը ամուսնանում են : Սոնան սկսում է սիրել ամուսնուն, զգալ երջանիկ ամուսնության քաղցրությունը, սակայն նա վախենում էր հիվանդության կրկնվելուց, և ամեն անգամ, երբ որոշում է պատմել ճշմարտությունը, լեզուն կապ է ընկնում: Մի օր, երբ ընտանիքի համար թեյ է պատրաստում, զգում է, որ մարմինը կծկվում է, նա ընկնում է գետնին և սկսում գալարվել ու խռխռալ: Ընտանիքի անդամները հասկանում են, որ Սոնան ընկնավոր է, և համոզում են որդուն բաժանվել նրանից: Սակայն Մուրադը նախընտրում է մնալ կնոջ մոտ, քանի որ սիրում ու խղճում էր նրան: Մուրադի մայրը՝ պառավ Զառնիշանը, իր տուն է հրավիրում մի կախարդ պարսկուհու, որպեսզի ազատի որդուն դևերից: Ամիսներ շարունակ պառավը գնում-գալիս է, սակայն ոչինչ չի հաջողվում, և մի օր գալիս է կախարդը և քուրսի տակ դնելով Սոնային՝ այնքան է պահում, մինչև շունչը փչում է:

Հերոսներ

- Սոնա – ընկնավոր աղջիկ
- Ոսկան-Սոնայի հայրը
- Շուշան-Սոնայի մայրը
- Գիժ-Դանիել- Մուրադի հորեղբայրը
- Մուրադ-Սոնայի ամուսինը
- Զառնիշան-Մուրադի մայրը
- Կարապետ-Մուրադի եղբայրը
- Գյուլնազ-Կարապետի կինը
- Սահարնազ-պարսկուհի կախարդ

,,Չար ոգին,, ստեղծագործությամբ Շիրվանզադեն գավառական հետամնացության գերխնդիրն առաջ է քաշում հիվանդության՝ ընկնավորության միջոցով, որը մասնակի երևույթ էր քաղաքում : Նա կերտում է բարոյական բարձր նկարագիր ունեցող մարդկանց կերպարներ՝ Մուրադ, գիժ-Դանել, և նրանց միջոցով հաստատում առաքինի մարդու իդեալը[5]:

Սոնա- ուրախ, գեղեցիկ, պայծառ մի աղջնակ, որն առանձնանում էր իր ընկերներից՝ իր առանձնահատուկ գեղեցկությամբ ու ճարպկությամբ: «-Եկե՛ք, եկե՛ք, եթե կարող եք, ինձ բռնեք[6]»,-այս խոսքերն ասելով վազում է՝ վստահ, որ արագոտն իր ընթացքին ոչ ոք չի

[5] Թամրազյան Հրանտ (1978): Շիրվանզադե / Կյանքը և գործը/: Երևան: ԵՊՀ հրատ.: Էջեր 150-162:

[6] Շիրվանզադե ,,Չար ոգի,,

կարող գերազանցել: Հիվանդության ի հայտ գալով՝ մեկուսանում է և վարում մոր կողմից բռնացած առանձին կյանք: Բռնացած ոչ թե չարությունից, այլ հասարակական քննադատությունից խուսանավելու համար, իսկ հետագայում՝ ամուսին գտնելու համար: Ողջ մանկությունն ու պատանեկությունը անցկացնում է կողպված դռան հետևում՝ տանը՝ մեն-միայն: Մայրն աշխատում է, հայրը՝ հարբում, իսկ աղջիկը հոգում է տան կարիքները: Ոչ ոքի չի մեղադրում. զոհի հոգեբանությամբ ապրում է և ի վերջո զոհ գնում: Հանուն ինչի՞, հանուն հիվանդությա՞ն, որ ի ծնե տրված էր իրեն, թե՞ հանուն ստի, որի միջով անցավ ողջ կյանքը: Աստված մի ձեռքով վերցնում, մյուսով տալիս է: Ի վերջո նա երջանիկ լինելու հնարավորություն ունեցավ: Մի կյանք մեկուսի ապրելով՝ ամուսնանում է ունևոր, գեղեցկադեմ և իրեն սիրող ու գնահատող երիտասարդի հետ, որը հիվանդության բացահայտումից հետո էլ չի հրաժարվում կնոջից: Ի՞նչը կործանեց աղջկան՝ բարքե՞րը, հասարակությու՞նը, անհանդուրժողականությու՞նը:

Ոսկան- հարբեցող մի սրիկա, որ բնությունից հայր էր կոչվում: Գողանում էր կնոջ կոպեկներով տնտեսած փողերը, որոնք աղջկա առողջության համար էր, և չարաշահելով աշխատեցնում էր աղջկան՝ վաստակած գումարը խմիչքի վրա ծախսելով: «Շատ անգամ երեկոները Սոնան, ճրագի առջև նստած, գուլպա էր հյուսում մինչև ուշ գիշեր: Մայրը թախանձում էր նրան չհոգնեցնել իր աչքերը: Իսկ հայրը պատվիրում էր հյուսել ու հյուսել, որ շուտով զույգը վերջանա: Եվ այս դեպքում աղջիկը հոր պատվերն էր կատարում: Վաղն ուրախ-ուրախ կհանձնի նրան, որ շուկայում ծախի: Ի՞նչ անենք, որ գուլպաների գինը սովորաբար օղեվաճառին էր գնում: Այդ Սոնայի գործը չէր:[7]»

Ոսկանի միջոցով հեղինակը նկարագրում է գավառական բռիությամբ, բարքերով ու անտարբերությամբ հայր-ծնողի, որ, ցավոք, հաճախ հանդիպել է հայ իրականության մեջ:

Շուշան- քաղքենի մի կին՝ աստվածավախ, աստվածապաշտ ու նաև՝ սնոտիապաշտ: Ողջ կյանքը տառապում է՝ հոգում կրելով աղջկա ցավն ու գաղտնիության անտանելի բեռը: Ոչ ոքի հետ չի շփվում, չի խոսում, տաժանակիր աշխատանքից հետո շտապում է դստեր մոտ՝ սիրելու, սփոփելու և նրա հետ շփվելու համար: Իր վաստակած չնչին կոպեկներից կարողանում է ողորմություններ բաշխել, օգնել ավելի կարիքավորներին: Ամեն կիրակի գնում է պատարագ և աղաչում Աստծուն՝ բուժել իր զավակին և երջանկացնել: Սարսափում էր այն մտքից, որ աղջկան ուզող չի լինի ու տանը կմնա... Մեղավո՞ր էր արդյոք մայրը: Կընդունե՞ր հասարակությունն իր զավակին՝ իմանալով չարագույժ ընկավորության մասին: Մայրը լռում էր, աղոթում ու հավատում Աստծուն, որ Աստված կլսի իր աղոթքներն ու կբուժի դստերը, որ հրաշք կլինի: Բայց Աստծո գործերն անքննելի են:

Գիժ-Դանել- անունը հակադրում է նրա մարդ տեսակին: «Այն օրից, երբ տեղի ունեցավ տխուր անցքը, գիժ-Դանելը շաբաթը երկու անգամ մտնում էր հացթուխի գավիթը և հարցնում Սոնայի մասին: Մի զարմանալի հոգատարություն էր ցույց տալիս այդ փողոցային խենթը փոքրիկ աղջկա վերաբերմամբ: Նա իրեն պահում էր, որպես փափկասիրտ մի արյունակից»[8]: Ի հակադրություն Ոսկանի, որ չարաշահում էր աղջկան՝ Դանելը խելագարվել էր աղջկա մահը տեսնելով: Հեղինակը պատահաբար չէ հոգատար այս մարդուն խենթի կերպարով ներկայացրել: Համայն անտարբերության, բամբասանքի

[7] Շիրվանզադե ,,Չար ոգի,,
[8] Շիրվանզադե ,,Չար ոգի,,

ու հետամնաց իրականության մեջ խելագար պետք էր լինել՝ մարդուն ընդունելու՝ ինչպիսին կա, աջակցելու և հավատարիմ լինելու համար:

Մուրադ- հեղինակը նկարագրել է հայ տղամարդու, որ, արժանի է հիացմունքի: Նա հոգատար զավակ է, բարեսիրտ ու քնքուշ ամուսին, հյուրընկալ մարդ և սրտացավ եղբայր: Ընդունում է ճակատագրի թե՛ պարգևները, թե՛ փորձությունները: Իր խոսքի տերն է, բայց ոչ անիմաստ համառ, այլ զուսպ և խոհուն: Կնոջ հիվանդությունն իմանալով՝ չի շտապում մեղադրել նրան կեղծիքի մեջ, այլ խոսելու հնարավորություն է տալիս, լսում է, մտածում և ընդունում իրականությունը: Պսակվելիս ասել է՝ տեր եմ, ուրեմն՝ տեր է: Բայց նա էլ է զոհ. անելիքը չիմանալով՝ մեկուսանում է մարդկանցից, վստահում կանանց բուժման ծրագրին և անորոշության մեջ վերածվում համակ սպասումի:

Զառնիշան- այս կնոջ միջոցով հեղինակը ներկայացնում է գավառական կյանքում սկեսուրի և հարսի հարաբերությունները, հարսին՝ որպես օտարի վերաբերվելը, որը երբեք ընտանիքի անդամ չի դառնում, մինչև այն պահը, երբ ինքն է հարս բերում արդեն:

Որքան էլ փորձես հասկանալ Զառնիշանին որպես մոր, որի զավակին խաբել են՝ հիվանդ աղջկա հետ ամուսնացնելով, միևնույնն է, նրա մեջ մայրական ջերմ ու հոգեթով որևէ գիծ չկա: Մայրը մնում է մայր՝ բոլոր ժամանակների համար, բոլորի համար: Նա որևէ խղճմտանք չուներ այդ խեղճ, դժբախտ աղջկա նկատմամբ, որ համակ նվիրվածություն էր, բարություն ու գեղեցկություն: Ի սկզբանե դեմ էր որդու ընտրությանը՝ աղջկա աղքատ լինելը պատճառ բերելով: Սոնայի գեղեցկությունը հակադրություն էր իր և ընտանիքի մյուս կանաց նկատմամբ. դա ատելության ևս մեկ պատճառ էր: Ի վերջո մայր, որը սպանել է տալիս հարսին բնածին հիվանդություն ունենալու համար: Մայր, որ իր ատելությունն ու կամքը զավակի ապրումներից ու զգացածից ավելին է, մայր, որ արդարացում ունի՝ իր զավակի ապագայի մասին է մտածում:

Կարապետ և Գյուլնազ-ամուսիններ, որոնք նախանձի և չարության մարմնացում են: Հեղինակը Գյուլնազին նկարագում է Սոնային ուզելիս, երբ չարագույժ հայացքով նայում էր աղջկան, իսկ վերջինս նրա հայացքը համեմատում է օձի հետ և սարսուռ է ապրում: Իսկ Կարապետ եղբայրը հանգիստ ապրում է եղբոր՝ Մուրադի հաշվին և չունի ո՛չ ամոթի, ո՛չ պատասխանատվության զգացում:

Սահարնազ-Հեղինակի կողմից պատահական չէ պարսկուհի կախարդի ընտրությունը: Հայուհին, իր բոլոր թերություններով հանդերձ, չպետք է լիներ մարդասպան և կախարդ: Թեպետ կախարդուհին ուներ Մուրադի մոր համաձայնությունը, բայց դեռատի հիվանդ և ուժասպառ կնոջը խեղդում է հենց պարսկուհին:

Գրականությունը հենց ինքը կյանքն է, կյանքի արտացոլումն է, և հեղինակը ի լուր հանրության մատնանշում է դարի և ժամանակի արատավոր հատկանիշներից մեկը՝ խավարամտությունը, մարդկային հիվանդությունը որպես արատ ընդունելը, հասարակությունից հիվանդին մեկուսացնելն ու նույնիսկ սպանելը: Իսկ մեղավո՞ր է այն մարդը, որը ծնվել է՝ ինչ-որ հիվանդություն իր մեջ կրելով: Մենք նրանցից ավելի՞ լավն ենք, եթե չունենք նմանօրինակ հիվանդություններ: Դա մեզ իրավունք տալի՞ս է

արհամարհելու, տրորելու նրանց: Հարցեր, որոնց պատասխանները լրջորեն մտորելու տեղիք են տալիս:

Ինչպե՞ս է հասարակությունը վերաբերվել և վերաբերվում Էպիլեպսիա ունեցողներին

Դեռ հնագույն բժշկական արձանագրություններում կարելի է հանդիպել էպիլեպսիայի մասին հիշատակումների: Հին դարերում այս հիվանդությունը կապում էին տարբեր ոգիների և գերբնական ուժերի հետ: Ամենավաղ հիշատակումը էպիլեպտիկ նոպայի մասին կարելի է գտնել աքքադական արձանագրություններում, որոնք գրված են եղել մեր թվարկությունից երկու հազար տարի առաջ: Այդ գրույթներում նկարագրված հիվանդներին համարում էին Լուսնի Աստծո գերիներ, և այդ կապանքներից ազատելու համար դիմում էին էկզորսիզմի: Էպիլեպտիկ նոպաները գրանցված էին Համմուրաբիի կոդեքսում /մ.թ.ա. 1790 թվական/, ըստ որի գնված ստրուկը կարող էր հետ վերադարձվել, եթե նա ուներ էպիլեպսիա: Էպիլեպտիկ ցնցումներ են նկարագրված նաև Էդմին Սմիթի պապիրուսներում /մ.թ.ա.1700 թվական/:

Որպես հիվանդություն՝ էպիլեպսիան, առաջին անգամ նկարագրված է Բաբելոնյան սեպագիր արձանագրություններից մեկում՝ «Սակիկկույում» /մ.թ.ա. 1067 թվական/:

Այս արձանագրություններում նկարագրված են հիվանդության ախտանիշները և ախտանշանները, բուժման մեթոդները և հնարավոր ելքերը, ինչպես նաև ներկայացվել են նոպաների տարբեր տեսակները: Բաբելոնցիները, չունենալով պատկերացում հիվանդության կենսաքիմիական գործընթացների մասին, էպիլեպտիկ նոպան վերագրում էին դիվահարմանը և համապատասխանաբար փորձում բուժել դուրս քշելով չար ոգիներին հիվանդի մարմնից: Մ.թ.ա 900-ական թվականներին Պունարվասու Աթրեյան նկարագրել է էպիլեպսիան՝ որպես գիտակցության մթագնման տեսակ[9]:

Այս մոտեցմանը հանդիպում ենք նաև Այուրվեդայում՝ Չարակա-Սամթիհա թղթում /մ.թ.ա 400 թվականներ/: Հին հոյները այս հիվանդության մասին ունեին հակասական տեսակետներ: Մի կողմից կարծում էին , որ էպիլեպսիան կապված է դիվահարման հետ, իսկ մյուս կողմից այն համարում էին աստվածային և հանճարեղ: Հենց այս պատճառով էպիլեպսիան կոչվում էր նաև ***սրբազան հիվանդություն:***

Էպիլեպսիան իր տեղն ունի հունական դիցաբանությունում. այն ասոցացվում է Լուսնի Աստվածներ Սելենի և Արտեմիսի հետ , ովքեր էպիլեպսիան ուղարկում էին իրենց զայրացնող մահկանացուներին՝ որպես տանջանք: Հույները հավատացած էին որ այնպիսի կարևոր դեմքեր ինչպիսիք են Հուլիոս Կեսարը և Հերակլեսը ևս ունեցել են էպիլեպսիա: Իր տեսակետով առանձնանում էր Հիպոկրատը /մ.թ.ա 5-րդ դար/ , ով չէր

[9] Mervyn J. Eadie, Peter F. Bladin (2001): A Disease Once Sacred: A History of the Medical Understanding of Epilepsi . Արխիվացված է օրիգինալից հունիսի 29, 2016-ին:

ընդունում ոգիների և աստվածների տեսությունը: Նա իր հայտնի՝ ***Սրբազան հիվանդության*** մասին տրակտատում ժխտում է այն տարածված կարծիքը, որ էպիլեպսիայի պատճառը գերբնական է, ավելին, հիվանդությունը ներկայացնում է որպես բժշկական խնդիր, որի դեպքում ախտահարվում է գլխուղեղը: Նա մեղադրում է այն մարդկանց , ովքեր շարունակում են մնալ սնահավատ ու պնդել հակառակը: Նա խոսեց էպիլեպսիայի ժառանգական գործոնի մասին ու նկարագրեց, որ ինչքան հիվանդությունը փոքր տարիքում է սկսվում, այնքան ելքը անբարենպաստ է: Չնայած մեծանուն բժիշկ Հիպոկրատի տեսակետները ճշմարիտ էին , ժամանակակիցների կողմից չընդունվեցին: Չար ոգիներին շարունակում էին մեղադրել էպիլեպսիայի առաջացման մեջ մինչև տասնյոթերորդ դարը:

Հին Հռոմում մարդիկ չէին օգտվում այն սպասքից, որից օգտվել էին էպիլեպսիայով հիվանդները: Ապուլեոսը և շատ այլ բժիշկներ էպիլեպսիայի ախտորոշման համար օգտագործում էին գագատ, որի ծուխը սադրում էր էպիլեպտիկ նոպա: Տարբեր մշակույթների ժողովուրդների կողմից ընդունված էին էպիլեպսիայով տառապողներին արհամարհել, մեկուսացնել, պիտակավորել, անգամ բանտարկել: Ժամանակակից նյարդաբանության ծննդավայր Սալպետրիերում Ժան-Մարտին Շարկոն գտել էր մի քանի էպիլեպսիայով հիվանդների, ովքեր կողք կողքի ապրում էին քրոնիկական սիֆիլիս և հոգեկան խնդիրներ ունեցող անձանց հետ: Հին Հռոմում էպիլեպսիան համարվում էր աստվածների կողմից ուղարկված անեծք, իսկ Իտալիայի հյուսիսում՝ Սուրբ Վալենտինի հիվանդություն: [10] Առաջին արդյունավետ հակացնցումային դեղորայքը՝ բրոմիդը, հայտնաբերվել է միայն տասնիններորդ դարի կեսերին , իսկ ժամանակակից դեղամիջոցներից ֆենոբարբիտալը՝ 1912 թվականին և ֆենիտոինը՝ 1938 թվականին:

[10] Արխիվացված օրիգինալից հունվարի 11, 2014-ին: Վերցված է փետրվարի 26, 2013: Illes Judika (2011-10-11): Enciklopedia of Mustics, Saints & Sages

Աշխարհահռչակ մարդիկ, որոնք տառապել են էպիլեպսիայով, բայց դա չի խանգարել նրանց՝ ստեղծելու համամարդկային արժեքներ

Էպիլեպսիայով տառապող հայտնի մարդկանցից՝

1. Լիլ Ուեյն- ռեփի սուպերաստղ, վերջերս դուրս է եկել մի վիճակից, որի հետ առնչվել է իր կյանքի մեծ մասը: 2013 թվականին նա հոսպիտալացվել է, երբ մի շարք նոպաներ է ունեցել: Նրանք եկել էին տեսահոլովակի ձայնագրությունից: Հիշելով այդ ժամանակը՝ նա ասել է . « Ոչ նախազգուշացում, ոչ ոչինչ, ես հիվանդ չէի: Ունեի շատ ուժեղ գլխացավեր»: Ապաքինվելուց հետո Լիլ Ուեյնը հարցազրույցի է բռնվել և պատմել, որ իր կյանքի ընթացքում բազմաթիվ նոպաներ է ունեցել: Հրապարակայնորեն խոսելով իր էպիլեպսիայի մասին՝նա փորձում է լույս սփռել միլիոնավոր երկրպագուների ծանր վիճակի վրա: Նա նաև նշել է իր երկրպագուներին, որ էպիլեպսիան չի խաթարի իր պլանները կամ կարիերաիայի ժամանակացույցը, ասելով, որ բժիշկը «չի ասել նրան, որ ես շատ բան եմ անում, ինչը տղամարդը, այնուամենայնիվ, չի անում: Քնել և ճիշտ սնվել, դա է խնդիրը»:

2. Թեոդոր Ռուզվելտ- Միացյալ Նահանգների քսանվեցերորդ նախագահ: Նա ուղղակիորեն չէր խոսում իր էպիլեպսիայի մասին, բայց խոսեց մարտահրավերների հաղթահարման մասին: «Ավելի լավ է համարձակվել մեծ գործեր անել, հոյակապ հաղթանակներ նվաճել, թեև անհաջողությամբ փորձված, քան լինել այն խեղճ ոգիների թվում, որոնք ոչ շատ են վայելում, ոչ էլ տառապում, որովհետև նրանք ապրում են մոխրագույն մթնշաղի մեջ: Քաջության ուժը այն է, երբ շարունակում ես, երբ էլ ուժ չունես»: Չնայած առողջական խնդիրներին՝ Ռուզվելտը հայտնի էր ակտիվ գործունեությամբ:

3. Դայ Գրին-օլիմպիական մարզիկ. նա օրինակ է այն բանի, թե ինչպես կյանքի սովորությունները կարող են իսկապես փոխել ձեր առողջությունը: Այն բանից հետո, երբ դեղամիջոցները չկարողացան վերացնել նրա նոպաները, նա հասկացավ, որ դրանք առաջացել են ալկոհոլի. սթրեսի և քնի պակասի հետևանքով: Նա փոխեց իր ապրելակերպը: Թեև դրանից նոպաները չվերացան, բայց նա կարողացավ վերահսկել իր կյանքը, և հաջողությունը ցույց տվեց, որ առողջ կյանքը կարող է հիանալի հավելում լինել պրոֆեսիոնալ բժշկական խնամքին:

4. Հուլիոս Կեսար-Պլուտարքոսը իր աշխատություններում հիշատակել է նրա հիվանդության մասին: Այդ հիվանդությունը իր մոտ ի հայտ է եկել հասուն տարիքում: Սակայն դա չի խանգարել նրան՝ լինելու հիանալի քաղաքական և ռազմական գործիչ:

5. Փրինս-լեգենդար կատարող և Գրեմմի մրցանակակիր: Առաջին անգամ հրապարակայնորեն խոսել է էպիլեպսիայի դեմ իր մանկության պայքարի մասին դեռ 2009 թվականին: Նա ասում է, որ դպրոցում իրեն ծաղրել են, և որ ինքը սիրող ծնողներ ունի, ովքեր չգիտեն՝ ինչպես պայքարեն իր հիվանդության հետ: «ՄԻ օր մայրս ինձ ասաց, երբ ես գնացի իր մոտ և հայտարարեցի. «Մայրի՛կ, ես այլևս չեմ հիվանդանա», նա հարցրեց՝ ինչու՞ ես այդպես կարծում, պատասխանեցի՝ որովհետև հրեշտակն ինձ այդպես ասաց: Հիմա ես չեմ հիշում այդ օրը, միայն մորս պատմածն եմ հիշում»:

6. Դենի Գլովեր-Օսկարակիրը մանուկ հասակում պայքարել է էպիլեպսիայի և դրան հետևող նոպաների դեմ: Ինչպես մյուս հիվանդները, նա էլ պայքարել է այս հիվանդության դեմ և կարողացել է հաղթահարել այդ խանգարումը և նկարահանվել հայտնի ֆիլմերից « Մահացու զենք» կինոնկարում:

7. **Սյուզան Բոյլ**- իր գեղեցիկ ձայնով «Britain’s Got talent» -ին ցնցող կինը նույնպես տառապում էր էպիլեպսիայով: Նա մանկության տարիներին պայքարել է այդ հիվանդության դեմ: « Ես հաճախ էի ուշաթափվում դպրոցում: Դա մի բան է , որի մասին երբեք չեմ խոսել: Ես ունեի էպիլեպսիա: Հանրության ուշադրության կենտրոնում գտնվող մարդիկ նման բաներ չպետք է ունենան: Իմ մանկության ընթացքում ինձ ասում էին, որ էպիլեպսիան մտավոր գործառույթ է: Իսկ հիմա հասկանում եմ, որ՝ ոչ: Ես դեմ էի այդ բոլոր խոչընդոտներին, և դա հեշտ չէր»: Խոսելով այս մասին՝ Բոյլը օգնում է լուսավորել երեխաներին, ովքեր կարող են բարդ հույզեր զգալ էպիլեպսիայի պատճառով:

Էպիլեպսիայով տառապել են Միխայիլ Դոստոևսկին, Ալեքսանդր Մակեդոնացին, Նապոլեոն Բոնապարտը:

Վան Գոգի էպիլեպսիան եւ նրա ստեղծագործությունը

1889 -ի մայիսին ֆրանսիական Սեն-Ռեմի փոքրիկ քաղաքից երիտասարդ մի նկարիչ մտավ գժանոց : Նկարիչը տառապում էր մեծ մտավոր մոլորություններից, և բժիշկները նրա մոտ ախտորոշեցին էպիլեպսիա: Նկարիչը Վենսան վան Գոգն էր:

Շրջելը նույն վայրերում և բնապատկերներում, որոնք Վան Գոգը վերստեղծեց իր նկարներում, հետաքրքրաշարժ հարցեր է առաջացնում. ինչպե՞ս նա տեսավ աշխարհը: Հնարավո՞ր է, որ ձեր ուղեղի ֆիզիկական խանգարումները վերափոխեն ձեր ընկալումները: Կարո՞ղ է պատահել, որ էպիլեպսիան ոչ միայն հոգեկան խնդիրներ էր առաջացնում, այլ միևնույն ժամանակ բարձրացնել ձեր զարմանալի ստեղծագործությունները:

Բժիշկ Շահրամ Խոշբին, Հարվարդի բժշկակն դպրոցից, ասում է. « Ես հավատում եմ դրան . Վան Գոգը աշխարհն այլ կերպ էր տեսնում, և մենք երջանիկ ենք, որ նա կարողացավ արտացոլել այդ աշխարհը կտավի վրա և թույլ տալ, որ այն տեսնենք նրա աչքերով»:

Վերջին երեսուն տարիների ընթացքում Շահրամ Խոշբին փորձել է վերակառուցել էպիլեպսիայի ազդեցությունը Վան Գոգի կյանքի և արվեստի վրա: «Մենք գիտենք, որ Վենսան վան Գոգը մի տեսակ նոպա է ունեցել, որը մի փոքր ավելի առնչություն ուներ իր գաղափարների և վարքի հոսքի հետ, քան էպիլեպսիայի ասպեկտների հետ, երբ հիվանդները գետնին էին ընկնում, նոպաներ են ունենում, բերանում փրփուր են ունենում, կորցնում գիտակցությունը»: Խոբշին կարծում է, որ Վան Գոգի դեպքում էպիլեպսիան ազդել է նրա ուղեղի մի հատվածի վրա, որը գտնվում է տաճարների հետևում, որը հայտնի է որպես **ժամանակավոր բլթակ**: « Այս ոլորտում մշակվում են թե՛ զգայական, թե՛ տեսողության և լսողության զգայարանները: Հեշտ է տեսնել, թե ինչպես կարող է այս տարածքում անկարգություններ առաջացնել **արտասովոր զգայական տարբերություն**»:

Եզրակացություն

Ինչպես վերն արդեն նշեցինք, գրականությունը կյանքի արտացոլումն է՝ իր բոլոր դրսևորումներով: Կարդալով գրական երկը՝ պետք է հիշել ու հասկանալ, որ այն երբեք ինքնանպատակ չի լինում, այլ հեղինակը հետամուտ է որևէ իսկության , գաղափարի լուսաբանմանն ու ներկայացմանը: Ներկայացրած դեպքերը, պատմական կամ մտացածին կերպարները, բնության նկարագրությունը, ամեն ինչ որևէ իսկության խորհրդանիշն ու արժեքն է :

«Չար ոգին» վիպակն ընթերցողի մեջ հարց է առաջացնում, թե այդ ինչ հիվանդություն է, որ հերոսուհին դրա զոհն է դառնում՝ չընդունվելով հանրության կողմից: Այդ հարցը ծագեց նաև իններորդ դասարանի աշակերտների միջև, որոնք խորամուխ եղան ճշտելու, պարզելու և բովանդակալից ուսումնասիրելու այդ հիվանդությունը և դրան հաջորդող հետևանքները: Հասկացան, որ ժամանակները փոխվել են, և ժամանակների հետ փոխվել է մարդկանց աշխարհայացքը : Ուսումնասիրությունների վերջում եկան այն համոզման, որ ոչ մի հիվանդություն **խոչընդոտ չէ ապրելու եւ արարելու համար**:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դ. Գասպարյան « Հայ գրականությունը հայոց պատմության հոգեկերտվածքի գեղարվեստական խտացումն է»: 07.08.2020 Սյունյաց երկիր. հարցազրույց:
2. ՀԱԿ, Հոգեկան առողջության և նյութական կախյալության բաժանմունք, նյարդաբանական հիվանդությունների և նեյրոգիտության զարգացման համար ծրագիր, Միջազգային Լիգա ընդդեմ էպիլեպսիայի /2005/:
3. Քրիեյթիվ Քոմմոնս Նշում-Համանման տարածում 3.0 /Creativ Commons BY-SA 3.0/թույատագրով թողարկված Հայկական սովետական հանրագիտարան /հ. 4, էջ 62/:
4. E. Martin Caravait /2004/: Medical toxicology: Արխիվացված, թարգմանած օրիգինալից հուլիսի 23, 2016:
5. Հրանտ Թամրազյան / 1978/: Շիրվանզադե / Կյանքը և գործը/: Երևան: ԵՊՀ հրատ.:
6. Սաֆարյան Վազգեն /2022 /: 19-րդ դարավերջի և 20 -րդ դարասկզբի հայ գրականություն: Երևան: ԵՊՀ հրատ.:
7. Շիրվանզադե ,,Չար ոգի,, վիպակ: